

Պէտք է ջանալ գովեստի արժանի ըլլալ եւ փախչիլ գովեստ լսելէ: Ով որ կ'ախորժի իր գովեստը լսելէ, կը կորսնցնէ իր արժանաւորութիւնը: Սեփական անձի մասին գովեստ լսելու ախորժակը սնափառութիւն է: Ճշմարիտ գովեստը դէմ յանդիման՝ նման է սուտ մարդահաճութեան:

Շատեր կը գովուին, բայց անոնցմէ քիչերն են գովեստի արժանի: Համբաւը շատ անգամ չի համապատասխաներ անոր՝ որ գովեստով կը հուշակուի, որովհետեւ հասարակութիւնը վարժ է բան մը հուշակել առանց լաւ տեղեկանալու՝ ճշմարտութենէն հեռու կերպով: Առաքիլի մարդը պիտի ներանձնաւոր ըլլայ, որպէսզի մարդոց հետ սակաւ խօսի, իր հետ՝ յաճախ եւ Աստուծոյ հետ՝ միշտ: Առանձնութիւնը հոգին կը բռնադատէ երկինք ելլելու եւ Աստուծոյ հետ խօսելու, որովհետեւ Աստուած մէկու մը սրտին մէջ կը խօսի՝ միայն անոր միայնութեան ատեն:

Մարդու խօսակցութեան առարկան, ինչպէս մարդն ինքը, երեք բանի կը յանգի. Աստուծոյ գովաբանութեան, որեւէ ճշմարիտ բան ուսանելու, կամ կարեւոր բաներ ուսուցանելու: Իսկ ով որ ասոնցմէ օտար բան կը խօսի, մարդկութեան սահմանէն կը շեղի, որովհետեւ իսկոյն կ'իյնայ կամ Աստուծոյ տրանջալու, կամ մոլորութեան ուսման, կամ անարժաններուն ուսուցման մէջ:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:

«Ձղային համակարգիս ցնցումը ա՛յնքան ծանր է, որ ինձի կը թուի՝ թէ պիտի խելագարիմ: Մանուկ հասակիս յաճախ կը հիւանդանայի, եւ մայրս զիս կը տանէր հմայողներու քով: Հետը լրջօրէն խօսեր եմ այս մասին, եւ ինք կ'ընդունի իր մեղքը: Միայն արտաքնապէս է որ աւելի «ջերմ» դարձեր է:

Տանջանքներս տեսնելով, ինքզինք յանցաւոր կը զգայ: Կու լայ ու կ'աղօթէ, սակայն հագիւ կ'ապաքինիմ՝ դարձեալ տարօրինակ անտարբերութիւն մը ի յայտ կու գայ ինձի հանդէպ...»:

Չեմ ուզեր շարունակել նամակին ընթերցումը: Անձնասպանութեան փորձեր, յուսալքութիւն, քնածութիւն (hypnose) եւ ջղային համակարգի խանգարում: Ա՛յս է նամակին բովանդակութիւնը: Կարելի է արագօրէն կարդալ. բայց երբ կը խորհիս որ մարդը ծանր ապրումներու մէջ է, գէշ կը զգաս: Մենք կրնանք ուրախանալ մեր Փրկչին համար: Կրնանք ուրախանալ, որ կ'ապրինք Իրեն համար եւ կը ծառայենք միայն Տիրոջ կրնանք համոզուիլ, որ կը լսէ մեր աղօթքները, որ մեր բարի հովիւն է Ան: Բայց չէ որ կան մարդիկ, որոնք Սատանան ամուր կերպով շղթայեր է մուսլ խորհուրդներով եւ անձնասպանութեան գաղափարներով:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՂԻՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂԱՆԵՐՈՂԻՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 11 ՆՈՅՆՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 46

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8:49-57

Մինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, այլեւս մի՛ յոգնեցնէր վարդապետը»:

Յիսուս ասիկա լսելով, ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախճար, միայն հաւատա՛ եւ աղջիկդ պիտի ապրի»:

Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ, չձգեց որ ոեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: Ներս գտնուողները բոլորն ալ կու լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ լաք աղջիկդ մեռած չէ, այլ կը քնանայ»: Անոնք զինք կը ծաղրէին, որովհետեւ զիտէին՝ որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս հանեց, բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ փոքրիկ, ոտքի՛ ել»: Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց, որ ուտելիք տան աղջկան:

ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ, ՄԻ՛ԱՅՆ ՀԱՒԱՏԱ՛

Քրիստոսի այս քաջալերական խօսքը հասկնալի եւ կիրարկելի կը դառնայ այն իսկական Քրիստոնեայ անհատին՝ որ իր Քրիստոնէական կոչումը կ'ապրի գործով եւ ոչ թէ խօսքով: Սաղմոսներգուն փորձառաբար կը վկայէ ըսելով. «Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, ես որմէ՞ պիտի վախնամ. Տէր'ն է կեանքիս ապաւէնը, որմէ՞ պիտի դողամ: (Սղմ. 26:1): Հետեւաբար սիրելի ընթերցող, դժուարութեան մէջ ե՞ս՝ մի մտածէր, դիմէ՛ անմիջապէս Աստուծոյ եւ վստահ գիտցի՛ր որ Տէրը անպայման պիտի լուծէ հարցդ, եւ քեզմէ պիտի հեռացնէ թշնամին: ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ ԱՅԼ ՄԻ՛ԱՅՆ ՈՒ ՄԻ՛ԱՅՆ ՀԱՒԱՏԱ՛ ՈՒ ԱՊԱԻԻՆԻՒՐ ԱՍՏՈՒԾՈՅ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԳԱՐԻԷԼ ԵՒ ՄԻՔԱՅԷԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԵՐԸ

Հրեշտակապետեր Գարրիելի եւ Միքայելի տօնը ըստ մեր եկեղեցւոյ տօնացոյցին կը գուգադիպի Շարաթ, 10 Նոյեմբերին: Եկե՛ք միասնաբար ծանօթանանք հրեշտակ բառի իմաստին եւ ապա հրեշտակապետերու:

Հրեշտակ բառը կը թարգմանուի պատգամաւոր կամ դեսպան: Հրեշտակները սահմանուած են սպասաւորելու հոգիներու փրկութեան այն մարդոց՝ որոնք պիտի ժառանգեն երկինքի արքայութիւնը:

Թէեւ Աստուծոյ առջեւ ծառայակից ենք հրեշտակներուն հետ, սակայն մեծ է տարբերութիւնը մարդոց եւ անոնց միջեւ:

Ինչպէս սուրբերուն միջեւ կան աւելի վաստակաւորներ, նոյնպէս եւ հրեշտակներու դասերուն մէջ: Անոնցմէ ոմանք ծանօթ են մեզի իրենց անունով եւ կը տօնախմբենք իրենց յիշատակը:

ԳԱՐԻԷԼ հրեշտակապետը, որ կը թարգմանուի Աստուծոյ մարդ՝ երկինքի բոլոր հրեշտակներէն աւելի ծանօթ է մարդկային ցեղին: Ան յաճախ պատգամաւորութեամբ հանդէս կու գայ Հին թէ Նոր Կտակարաններուն մէջ, որպէս գործակալ կամ դեսպան երկնաւոր Փեսային:

ՄԻՔԱՅԷԼ հրեշտակապետը ներկայացուած է որպէս երկնային զօրավար եւ միանգամայն, վերակացու ու պաշտպան Աստուծոյ եկեղեցիին: Երբ Մեծն Կոստանդիանոս իր դարձէն ետք բազմաթիւ եկեղեցիներ շինել տուաւ, ասոնց շարքին հռչակաւոր եղաւ Ս. Միքայել հրեշտակապետի տանարը:

Ըստ աւանդութեան, բարեպաշտ կայսրը Սուսենիոնի մէջ գտաւ արձան մը, որ կը ներկայացնէր արծիւի թւերով այր մը: Երբ կայսրը հարցուց թէ որո՞ւ արձանն էր ան, Միքայել հրեշտակապետը անոր երեւցաւ եւ ըսաւ, որ հոն տանար մը կանգնէ, որպէսզի հաւատացեալներուն համար ուխտատեղի մը ըլլայ եւ այդտեղ երկնային բարեխօսութիւն գտնեն իրենց հոգեւոր եւ մարմնաւոր կարիքներուն համար:

Յայտնաւորքները կը գրեն, թէ երբ առաջին անգամ պատարագ պիտի մատուցուէր Ս. Միքայելի անունով կառուցուած եկեղեցիին մէջ, ի ծնէ խուլ եւ համր պատանի մը կանխեց սարկաւազը եւ բարձրաձայն ըսաւ. «Պոսիտումէ», որ կը նշանակէ զգոյշ եղէ՛ք: Եւ ապա սուրբ հայրապետը ըսաւ. «Ի սրբութիւն սրբոց»:

Ներսէս Շնորհալի իր եղբօր՝ Գրիգորիս կաթողիկոսի խնդրանքով, 100 տուն ոտանաւոր գրեց՝ նուիրուած պանծալի հրեշտակներուն:

ՈՐԵՒԷՆ ԵՒ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿՍԵԼԷ ԱՌԱՋ

Գրաբար

Իմաստութիւն Հօր, Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն՝ զբարիս խորել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ զիս: Եւ ողորմեա՛ քո արարածոցդ, եւ ինձ՝ բազմամեղիս:

Աշխարհաբար

Ով Յիսուս՝ Հօրը իմաստութիւնը, իմաստութիւն տու՛ր ինձի՝ որ բարի բաներ խորհիմ, խօսիմ եւ գործեմ քու ներկայութեանդ, ամէն ժամ. չար խորհուրդներէ, խօսքերէ եւ գործերէ փրկէ՛ զիս: Եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձի՝ մեղքերու մէջ կորսուածիս:

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Քրիստոնեան պարտի օրը երեք առիթներով աղօթել, առաւօտուն՝ երբ բունէն արթննայ, մաշի ժամուն, եւ գիշերը՝ քնանալու պահուն: Իրաքանչիւր աղօթքի ժամուն այր մարդիկ ու կտրիք երիտասարդներ պէտք է 12 անգամ ծննդադրեն, որ կ'ընէ օրը 36 անգամ. իսկ կիներն ու աղջիկները պէտք է 20 անգամ ծննդադրեն, օրական՝ 60 անգամ:

Մարդ երբ արթննայ, պէտք է աղօթէ, գոհութիւն տայ Աստուծոյ՝ որ զինք խաւարէ լոյսի հանց: Ճաշի ժամանակ պէտք է շնորհակալութիւն յայտնէ՝ որ կերակուր տուած է, եւ ոչ թէ անասունի նման անգիտակցաբար վայելէ Աստուծոյ բարիքը: Գիշերը պէտք է աղօթէ որպէսզի մութին ու գիշերուան մէջ Աստուած անփորձ պահէ, նաեւ գոհութիւն յայտնէ, որ օրը խաղաղութեամբ վերջացաւ: Մի՛ ձգէ՛ք որ ձեր գաւակները առանց աղօթքի հաց ուտեն կամ քնանան: Այս երեք աղօթքները անխափան ամէն տեղ կատարեցէ՛ք քամբան, արտին ու այգիին եւ բոլոր գործերուն մէջ. որովհետեւ սուրբ առաքեալը Փիլիպպոս կանոն դրած է, թէ՛ «Ամէն այր կամ կին կամ երիտասարդ որ իր գործի ժամէն դուրս առաւօտուն եւ երեկոյեան կը խափանէ աղօթքները՝ եկեղեցի չերթալով եւ ականջ չդնելով սահմանուած կարգերուն, նգովուած ըլլայ» (Կանոն Ը):

Որդի՛ք, ձեր Հօրը խրատը լսեցէ՛ք ու մտիկ ըրէ՛ք, որպէսզի իմաստութիւնը ճանչնաք: Վասն զի ձեզի աղէկ կրթութիւն կու տայ:

Սաղմոս 4.1-2

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ԳՏՆԵԼ ՀՈՍԱՆՔԸ

Գիրքը կ'ըսէ. «Ան որ ուօր շահաւոր, ստոր արեւս անտար ջորո գեստր որոն բորս»: (Յովհ. 7.38)

Երբ պաշտօնակիցի մը հետ կը ջանային համակարգիչի մը մէջ տեսարիզ մը խմբագրել, պաստառին վրայ սխալի մը ակնարկութիւնը արձանագրուեցաւ, որ կ'ըսէր. «Անպարտ՝ ՀՈՍԱՆՔԸ ԳՏՆԵԼՈՒ»:

Համակարգիչի այդ նշումը ինծի յիշեցուց հետեւեալ ժողովրդային ասացումները. «Գեւ՝ ՀՈՍԱՆՔԸ ՀԵՏ»: Այս խօսքը շատերուն համար կը նշանակէ ընել եւ վարուիլ այնպէս՝ ինչպէս մեծամասնութիւնը կ'ընէ եւ կը վարուի, առանց փորձելու ընկերային եւ մշակութային տիրող հոսանքին դէմ թիավարել: Ուրիշներու համար այս խօսքը կը նշանակէ ընդունիլ տիրող պայմանները, առանց անոնց մասնաւոր ուղղութիւն տալու նիզ մը կատարելու:

Սակայն, Յիսուսի հետեւորդներուն համար կայ ուրիշ ուղղութիւն մը հոսանքին հետ երթալու: Յիսուս ըսաւ. «Եթէ մտն ջառաւ Է, թող գայ ուօր եւ ուտ: Ան որ սը շահաւոր ուօր անտար ջորո գեստր որոն բորս անտար արեւս, ուօրու գորքը ս շաւ» (Յովհ. 7. 37-38): Յիսուս խօսեցաւ Սուրբ Հոգիին մասին, որ բնակութիւն պիտի հաստատէ իւրաքանչիւր հաւատացեալի հոգիէն ներս: Իսկական իմաստով, երբ Քրիստոսի տեղ տանք մեր կեանքէն ներս, հոսանքը մեզ կը գտնէ եւ մենք՝ հոսանքը: Անկէ ետք մենք թէ՛ ստացողը ու թէ՛ փոխանցողը կը դառնանք կենդանի ջուրին, յախտեանկան այն՝ աղբիւրին, որ կը գոհացնէ մեր հոգեկան ծարարը: Մեր մէջ բնակող Սուրբ Հոգին կ'առաջնորդէ մեզ յաճախ մեծ գորութեամբ եւ նպատակով մը, որ շատ աւելի վեր կը մնայ քան՝ մեր անձը:

Որպէս խողովակները Աստուծոյ կենդանի ջուրին, մենք ազատ ենք Անոր հոսանքին հետ երթալու:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ

24.1-14

Ահա Տէրը պիտի կործանէ եւ աւերէ ամբողջ աշխարհը, տակնուվրայ պիտի ընէ աշխարհը եւ պիտի ցրուէ անոր բնակիչները:

Այլ կարելի պիտի չըլլայ գանազանել որն է աշխարհականը եւ որը՝ քահանան, ով է ծառան եւ ով՝ տէրը, ով է աղախինը եւ ով՝ տիկինը, ով է գնողը եւ ով՝ ծախողը, ով է փոխ տուողը եւ ով՝ փոխ առնողը, ով է պարտատէրը եւ ով՝ պարտապանը:

Երկիրը ամբողջութեամբ պիտի կործանի, պիտի յափշտակուի եւ աւերուի. ահա Տէրը ինձ այս բաները կը յայտարարէ:

Երկիր՝ իր կործանումը կը սգայ, աշխարհ՝ իր կործանումն ու աւերը. աշխարհի դեկավարները նոյնպէս կը սգան, որովհետեւ աշխարհը անօրէն մարդոցմով լեցուեցաւ, որոնք Տիրոջ Օրէնքը ոտնակոխ ըրին, անոր պատուիրանները փոխեցին եւ անոր հետ կնճուած յաւիտեանական Ուխտը չյարգեցին:

Այդ իսկ պատճառով Աստուծոյ նրգովքը պիտի հարուածէ երկիրը, որովհետեւ անոր բնակիչները մեղանչեցին. մարդիկ թշուառութեան պիտի մատնուին, եւ շատ քիչ պիտի ըլլան հարուածէն ազատածները:

Գինին խմող պիտի չունենայ, այգին՝ քաղող, խրախմանքը հառաչանքի պիտի փոխուի, ուրախ թմբուկները պիտի լոնեն, ամբարիշտներու սնապարծութիւնն ու հարստութիւնը վերջ պիտի գտնեն, քրնարներու ձայնը պիտի դադրի:

Մարդիկ ամօքով պիտի մնան, գինին պիտի չկարենայ գիրենք ուրախացնել, եւ օդին լեղի պիտի թուի խմողներուն:

Շարունակել Աստուածաշունչէն

ՊՕԴՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԵՓԵՍՍՅԻՆԵՐՈՒՆ

5.15-33

Հետեւաբար ձեր ապրելակերպին ուշադրութիւն ըրէ՛ք: Մի՛ ապրի՛ք անմտօրէն, այլ՝ իմաստուններու պէս: Օգտագործեցէ՛ք ժամանակը, որովհետեւ այս օրերը չար են: Ուստի անմտութիւն մի՛ ընէ՛ք. հասկցէ՛ք թէ ի՛նչ կ'ուզէ Տէրը ձեզմէ: Գերին մի՛ դառնա՛ք գինիին՝ որ անառակութեան կը տանի. այլ մասնաւորաբար Սուրբ Հոգիով լեցուեցէ՛ք, իրարու հետ սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով խօսեցէ՛ք, եւ ձեր սիրտերուն մէջ միշտ երգեցէ՛ք ու սաղմոս ըսէ՛ք Տիրոջ: Միշտ, ամէն բանի համար շնորհակալութիւն յայտնեցէ՛ք Հօր Աստուծոյ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով:

Քրիստոսի հանդէպ ձեր պատկանանքը արտայայտեցէ՛ք իրարու հնազանդելով: Կիներ, հնազանդեցէ՛ք ձեր ամուսիններուն, ինչպէս Տիրոջ պիտի հնազանդէի՛ք. որովհետեւ ամուսին մը իր կնոջ գլուխն է, այնպէս ինչպէս Քրիստոս գլուխն է եկեղեցիին՝ իր մարմնին, որուն փրկիչն է ինձ: Հետեւաբար, ինչպէս եկեղեցին Քրիստոսի կը հնազանդի, այնպէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց ամուսիններուն թող հնազանդին:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԻՆ**